



Մ Ո Ւ Ս Ը



Մանուկ եի, դեռ անծանօթ աշխարհի,
 Երբ նա, մանուկ, երեւեցաւ ինձ պայծառ.
 Նորա առաջ սիրքս անմեղ բաց
 արի,
 Եւ մօտեցաւ ինձ աշերտի շուսա-
 վառ,

Քաղցրաժպիտ որպէս հրեշտակ երկնային
 Եւ գրաւիչ զերթ գարնան երգն առաջին...
 Քայց նա անգէտ խաղաղութիւնս վրդովեց
 Ու սիրքս նո՛ր զգացումներով խռովեց:

Երեւեցաւ նա ինձ որպէս մի մասաղ
 Գեղեցկութեան չնաշխարհիկ դիցունի.
 Ձերթ հրաշալի կոյս բնութիւն եր չֆնաղ
 Եւ ցրնորֆիս հրապոյրֆիցն էլ նազելի:
 Վայելչութեան անհռն դրախտ խոստացան
 Սիրաբորբոք նորա աշեր դիւքական...
 Քայց միայն վիշտ ճաշակեցի այն ժամից,
 Եւ դառնութեամբ լցունեց հոգիս անձկալից:

Առջեւս հիմա կանգնած է նա սգաւոր,
 Իբրեւ մի մայր որդեկորոյս, յուսահաս.
 Նորա դէմքին կարդում եմ եւ բիւրաւոր
 Ցաւերի վէպն աշոց հաւնար աննկատ...
 Բայց ինձ սիրում, զգում է ինձ գորովով,
 Եւ եւ նորան մօտենում եմ հաւաստով,
 Հանգիստ առնում նորա կործփն վշտահար —
 Մխիթարիչ հրեշտակ է նա ինձ հաւնար:

Ե. Յովհաննիսեան

